


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ՆԱԽԱ ԿԱՏ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ
ՊԵՏԻ Է ՈՒՂՂԵՒ, ԱՌ
Խմբագր. ԱՐՇԱՆՈՅՍ Բազմի
ԳԱԶԻԷ (Հասցեագրի)

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
HABBANIEH LE CAIRE (ÉGYPTE)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒ ՇԱՐԱԹ
Տարեկան, ողջ դահլիճ. 60
Վեցամսեայ » 35
ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐ
Տարեկան Ձրանի 20
Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԽԿ Է
ԵՒ ԲՂՔԱՏԱՐԻ ԾԱԽԲԸ
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած
գրութիւնք ԵՍ չ'են օրուր:

ԱՐՇԱՆՈՅՍ
ԻՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ

1 Յունուար 1900.

Կ Ա Ղ Ա Ն Դ Ը

Տարի մ'ալ կ'անցնի, կ'անհետի, կ'երթայ թաղուիլ անդնդախոր յաւիտենականութեան մէջ անդարձ ուղևորութեամբ: Ժամանակի այս շոգեպիտի վաղքին մէջ կան կայաններ, ուսկից մարդ կարծես պէտք մը կ'զգայ յետագարձ ակնարկ մը նետելու անցելոյն վերայ. տեսնելու հո'ն՝ այդ անցելոյն մէջ՝ իւր սխալ թիւր արարքները, եթէ կան, իւր սայթաքումները ընկերային պահանջմանց հանդէպ, և կամ գործոն իւր մէկ դերը, որով օգտակար եղած էր իրեն ներսն. մէկ բառով՝ կնքելէ առաջ այդ անցեալը, դաս մը առնելու աղկից և ըստ այնմ գծելու իւր ապագայ ուղին:

Այս յետագարձ ակնարկը ինքնամփոփում մ'է, ներքնահայեցութիւն մը. և ինչ դասակարգի ալ վերաբերի և ինչ միջավայրի մէջ ալ գտնուի մարդ՝ կ'զգայ պէտքը այդ ինքնամփոփումին որ իւր գործոցը համարատուութիւնն է: Ժամանակի ընթացքին մէջ այդ կայանը Ամանորն է, կազանդը:

Վաճառականը ձեռքը ծնօտին՝ սոմարացը դէմը անցած, կը հրճուի կամ կը տրտմի՝ հաշուեկէշին նպաստաւոր կամ աննպաստ ելքին համաձայն. ահա վաճառականին կազանդը:

Իսկ կղերին համար — ցանցառ բացառութիւնները յարգելով... եթէ կան — կազանդը ուրիշ բան չէ այլ կարապետը Ծննդեան անօրհնեմքին... այս բառին թանձրացեալ խնամովը: Շահեկանութեան զուրկ չի պիտի լինէր անշուշտ եթէ մարդ փորձէր պատկերը ներկայացնել հոգեկան կացութեանը քահանայի մը՝ որ ունեցած է տարւոյն ընթացքին մէջ զօրաւոր պատճառներ ինքզինքը մեղադրելու. ո'րքան խնկիր

է զարգացեալ և նամանաւանդ սրտի ազնուութիւնն ունեցող կղերը, նոյնքան ալ խոտելի է այն՝ որ իւր կոչմանը գիտակցութիւնը չ'ունի:

Այժմ անցնինք պանդուխտին. Պանդուխտը՝ հեռի ծնողական յարկէ, հայրենի երգիքէ, օտար աստեղց տակ թափառուն աստանդական, հիւրամերժ ակնաց վրայ, երբեմն ալ անհամբոյր միջավայրի մը մէջ — յորժամ կրկնապէս պանդուխտեալ կը սեպուի — երբ կը տեսնէ չուրջը կայթ ու ծիծաղ՝ տեսնելու համար նոր տարին, ահա՛ մէկէն սիրելոյ մը յիշատակն է որ կ'արթնայ իւր մտայր մէջ: Կը ցնցուի իւր ամբողջ էութեամբը, կը սարսուի. և ահա՛ կ'ամ կը դիմէ օդին միջնորդութեանը, անէացման վայրկեաններու մէջ մոռնալու համար սխալ իրականութիւնը ուր ինք կը գտնուի, և կ'ամ կ'երթայ կ'առանձնանայ խցիկի մը պզղ պատերուն մէջ՝ խոկալու անցելոյն վերայ, չափելու չափչափելու ներկայ ու ապագայ հաւանականութիւնները. և այս բոլոր խոկմանցը մէջ առանձին է միայնակ խեղճ չուառ պանդուխտը, հեռի իրեններէն. սիրտը կ'արիւնի... և այս ալ պանդուխտին կազանդն է:

Այս անցնող տարւոյն մէջ կարելի է ըսել թէ ընդհանուր ազգութեան տեսակէտով գրեթէ նոյն statu quo-ն կը շարունակուի: Իսկ զայսով Եգիպտոսայ գործոց, այդ մասին դժբաղդաբար փայլուն բան մը չ'կայ արձանագրելիք. չ'ունինք, ո'չ ուսուսահայոց ազգային հաստատութեանց համար ըրած նուիրատուութեանցը նման ցուցակներ հրատարակելու, և ո'չ ալ... «Ինտելիգէնտ» երիտասարդութեան մը գործօն մէկ դերը. բացարձակապէս ոչինչ. նոյն նեղումն է որ միշտ կը հոսի գէթ երբեմն մեղր հոսեր, ինչպէս հին առասպել մը կ'ըսէ — և նոյն բուրբերը, ուր Սփինքս դարերէ ի վեր կը նայի անկարելի:

Միայն Պատրիարքին յիշատակութեան խնդիրն է, կամ կարճ բառով «հարցը» որ բաւականին ազմուկ հանեց 99ի չըլանին վերջերը: Այն տխմար միջոցները որոնց մով ուզեցին վերջ մը դնել այդ խնդրոյն, սե արատ մը պիտի մնայ ընդ միշտ տեղային-ազգային տարեգրութեանցը մէջ յե-

տագայը զլուանքով պիտի տեսնեն հո'ն, այդ տարեգրութեանցը մէջ՝ ամիրայական դրութեան մը վերջին բեկորները. պիտի տեսնեն հոն նաև ապիկար ժողովուրդ մը՝ որ անկարող եղած է իւր ձայնը բարձրացնելու և որով հեռի է օրինակելի լինելէ:

Ահա այս է հին տարին, բոլորովին անփառունակ. մաղթենք որ նորը լինի փայլուն:

ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՄԼԵԱՆ

ԱՆԵԼ ԴՊՈՒԹԵԱՆ ԵԼԲԸ

Ընկերական ազէտքները կ'աճին բարդ տոկոսով. անհատներու կեանքը ուրոյն ուրոյն կը սեղմուի պողպատ անուրնեղու մէջ. ճակատագրապէս համանման կեանքեր, առանց խորութեան կրօնքի, դասանքի ու ազգայնութեան անդիտօրէն իրար մօտենալով կը հոծացնեն ու անբեկոյթ թելով մը իրար կը հիւսուին կազմակերպելով զրկուածներու միջազգային համայնք մը. ապագայի անեղ ու համամարդկային կողմի զինուորագրութեան զրօշին տակ օրէ օր կը խտանան մարդիկ, ու այդ կողմը կը լինի բնական, արգար ու անխուսափելի: Իւրաքանչիւր հասարակութեան ընչազորիկ դասակարգի ոսկոր ու կաշի դարձած անգամները, արգէն առանց իրարմէ տեղեկութիւն ունենալու, ա'լ կ'ըմբռնեն թէ համաժխարհային կողմի մը անհրաժեշտութիւնը միայն կրնայ սեղծել մարդկային կեանց ապագայ բարօրութիւնը:

Ընչաքաղց մարդը կ'ուրանայ ընչազորիկ դասի raison-d'êtrer. աշխարհ սեպակականութիւն կը դառնայ քանի մը արիւնարբու ազրուկներու ձեռք. իր սեւ զլուխը վայելու համար զննելիք վայրիկ մը չունեցող masse-ան կրկարածիք սեւ թմբիքէ մը հազիւ զարթած կատաղի կ'ընդունու ու իր արժանապատուութիւնը իրաւորուած կ'զգայ թէ ինքը աշխարհի վրայ տեղ չունի, ու պէտք է ունենայ վրդոված աշխարհի հեւացող ուռած կուրծքը պոթկալու պէտքը կ'զգայ, հանգստի պէտք ունի նա. ու կը ժայթքէ, դուրս կը վիժէ հարստանարողներու իր սրտին վրայ կուտակած թոյն ու ժանրի թանձրաչերտ ժանգը. սրտի ժանգը պէտք է քակել, մաքրել:

Ի զուր դաւաղիք քաղաքապետներու և կառավարութիւններու արհեստական պատրաստութիւնները կը տքնին այդ կողմի յառաջխաղացումը արգելել. ի զուր կառավարական վարչագէտներ հաշտ քաղաքականութեան կեղծող վրդձիւրով կուզեն խաղաղութեան հիմնարկէք ուր ուսագծել. ի զուր թաղակիրներ, մտատանջ մարդու զողերէն բռնուած՝ քանի մը կեղծ ու պատիր չողովներով, տառապող հասարակութեան սեւ ցաւը զգալ կը կեղծեն ու իրենց թագաւոր գլուխներու վրայ վայրկեանէ վայրկեան պայթելիք այդ ալիքին նահանջմանը համար, մարդկային մեծամասնութեան արգար պահանջներուն գոհացում տալու խարդախ ձեւականութիւնները կը շուշխն անվերջ ու անվերջ հոծացած խոտուտներու անիրազորմ-

ծելի պոռոտախօսութիւններով: Խաբուած մարդը իր անդաճնալի կոխը վաղուց սկսած է արդէն. անոնց խաղացած զաւեշտախաղի բացուող ու գոցուող վարագոյրներուն ետեւէն նայող իր փորձառու թափանցող վարժ աչքերը՝ ա՛լ չեն խաբուել:

Լարախաղացի ճարպիկութեամբ իրար փարատելու պատրաստ պետութիւնները, իրենց շահով միայն զբաղած, ո՛չ, ա՛լ չեն կրնար համոզել թէ անվերջ տառապանքի ենթարկուած տկար անհատներուն եւ իրենց սուրբ իրաւունքները անտեսուած փոքրիկ ազգութիւններուն պահանջքին զոհացում կրնայ տրուել օր մը: Պետութիւնները Գառագեղի վանդակորմերուն մէջ զսպում գազաններ են. իրար փարատելու միշտ պատրաստ այդ գազանները ի դուր թող չի ջանան ուրեմն ըստ երեւոյթին հաշտ քաղաքականութեամբ մը իրարմէ չեզոքանալ կեղծելով ըստ կարելոյն իրար դէմ բռնկումի պատճառներ չ'ստեղծել. եւ քանի որ պետութիւններու այդ տառամախաղներուն մէջ տուժողը անհատներն ու փոքրիկ ազգութիւններն են, անոնք միայն կրնան ըլլալ այդ Գառագեղի գազաններուն կենդանագուստը. անոնք միայն կրնան հաւաքական եւ անհատական խլրտու մեծերով, իրենց գաղտնածածուկ պատրաստականութիւններով երկարել իրկարել իրենց ահաւոր թիւը, հոն ուր այդ գազանները իրենց որջերուն մէջ քաշուած կը կարծեն մարտել իրենց զոհերու ամուր գոցուած վանդակափեղկերու կոճակները կը սեղմուին օր մը, գաղտնազողիլ զսպանակները կը շառաչեն, երբ համայնքներու զսպում կատաղութիւնը ա՛լ լեցուելու տեղ չունենալով իր ահաւոր քայլերը կանխելու կը պոռթկայ. վանդակափեղկերը կը թաւալին իրենց, կը բացուին անջըպետները, մարդկութեան իրաւունքի խորհուրդը կը մերկանայ . . . ու կուռելու պատրաստ արտյաններ կը չափուին իրար հետ կողք կողքի կանգնած, ու դանակը կը լուծէ կորզեան հանգոյցը:

Ազգերու ու անհատներու իրաւարարութեան համար վերջերս ձեռք առնուած միջոցները տկար ըլլալէ անկէ յապաղած ալ են. կուռեց խնձորը վաղուց զլորուած է, պէտք է զայն կասեցնել իր թաւալումէն, ու արիւնք միայն կրնայ կանգ առնել տալ այդ թաւալուն գունդին, որովհետեւ աշխարհի արիւնքով գծուած բլանք խաղաղասիրութեան տկար վրձինով չառեղծուիր:

Մարգարէ ըլլալու հարկ չ'կայ. երեւոյթներու շարքերը ինքնին համոզիչ փաստերով կ'առաջնորդեն ու կը կազմակերպեն այդ բնական կոխը: Ինչ վիճակի մէջ է աշխարհ, քանի՞ երջանիկներ կարելի է թուել. մինչդեռ թշուառութիւնը փողոցներու մէջ յորգած հեղեղի մը նման ալ ու ձախ կը խուժէ. դրամապաշտ քանի մարդոց աչքերուն տակ ամեն վայրկեան բիւրուար մարդկանց անսուղ զաւակները կ'ընկնին անչնչացած. կը քայքայուին ընտանիքները, ապրուստի կարօտ բան որներու բազուկները աշխատութեան պատրաստ անդործ կը ծալուին կրծքի վրայ, « Գործ չկայ » կը գոռան խտատիրա մարդիկ վայրենի հայտնելով մը. անդ « հաց » կ'աղաղակէ խուժանը մտնելիս: ու աչքերը սեւացած, ու մեքենաները կը թաւալին ու կը թաւալին քանի մը կիսաբե դարձած բանորներու երթիմամբ բազուկներով միայն, ու ազան գործարանատիրոջ, անփոյթ հողատիրոջ ոսկին կը բարդուի ոսկու վրայ: Վար ու ցանք ընողինն է հողը, հողէն զրկուելով կեանքէն զրկուած է մշակը. ու անդին անձայրածիր հողերու վրայ իր թաթը գրած երջանիկ կը խորշայ աղան իր հէք մարաբաի ամենահասարակ մէկ խնդիրին դէմ հեգնտ քմիծաղով մը լոկ պատասխանելով: Կողպուած դրամը քուրջերու մէջ բռնուած է: Մինչդեռ դրամարկիւններու մէջ բանատարներու այդ ոսկու հակերու խղճատալից շըրջանակութեամբ մը կարելի պիտի ըլլար գոնէ մասամբ մեղմել մարդկութեան յարածուն թըշուառութիւնը, ու յապաղեցնել այդ անխուսափելի փութկոտ փոթորիկը:

Ինչ պէտք է ընել. Գիտե՛մ. ապահովուած երջանիկը կը պատասխանէ, « Ոչի՛նչ . . . »: Իսկ ատոր ի պատասխան կարօտ թշուառն ալ կը գոռայ. « Կոխ՛ . . . »: Դո՛ւք, երջանիկներ, դո՛ւք, կրնա՛ք երեւա-

կայել թէ ի՛նչ է օրհասականի դրութիւնը. ահա ձեզ օրինակ.

Բանտարկեցէք նոյն իսկ ձեր կատուն, եթէ կուզէք ձեր տան տաքուկ, գորգապատ ու թաւիչ դահլճին մէջ. անսուղ պահեցէք զայն քանի մ'օրեր. շառաչող մտքակը ձեռքերնիդ ներս մտէք օրին մէկն ալ, ու փոխանակ չոր հացի կտոր մը երկարելու անոր, ձեր մտքակը շարժեցէք անոր կունակին. ու ի՛նչ պիտի տեսնէք. նա ողորակին մլաւուններու պաղատանքով մը ձեր քար սիրտը կակղել փորձելէ, դուռ ու պատուհան ճանկոթելէ վերջ, ձեր անգթութեան անորակելի ցոյեցրէն ճարահատ վերջապէս պիտի կանգնի ձեզ դէմ ու գէմ. մազերը պիտի ցցուին ուռած մէջքին վրայ, դժոխքի բոցով աչքերը պիտի կայծկուան, ոտքերուն վրայ պիտի տնկուի ու իր ամբողջ զօրութիւնը մագիլներուն մէջ ամփոփած, իր անպարտելի կորուրի կատաղութիւնը հագած, դէմքի պակուցիչ չեշտ գծերով, մազերու քսամեկուցիչ արհաւիրքով պիտի նետուի, պիտի խոյանայ վերջապէս ձեր աչքերուն մէջ ցցելու իր ամբողջ զօրութիւնը ու վա՛յ ձեզ այն ատեն: Կուռի դէմ կոխ՛ . . .

Ահա՛ սեղմուածի անել դրութեան կէքը: Ահա՛ մարդկային մեծամասնութեան դրութիւնը:

Ահա՛ աշխարհի դրութեան կէքը, իր ահաւոր կուռի նախորդ օրուան մէջ:

Ու մարգարէ մ'ըլլալու հարկ չ'կայ . . . : Ահա՛ ամեն ազգերու մէջ գործաւոր, անգործ, զարգացած, անուս, թշուառ երիտասարդութեան օրուստ տաքնապալից հարցը. բայց թագուն ծեծուող հարցը: Երբեմնի աննորութեան, արգուզարդի, հաճոյքներու նուիրում յարտասարդութեան դատարարելի շրջանն անցած է: Ծակատը խոռով, աչքերը ուռած ու սեւցած, միտքը փոթորկակոծ, ընկերական կեանքի բարեբան կրակով կը վառուի միայն արդի երիտասարդութիւնը:

Իսկ դո՛ւ, հայ երիտասարդ, դո՛ւ ի՛նչ կ'ընես, ինչո՞ւ շուրջդ չես նայիր, ինչո՞ւ միտքդ աշխոյժի մէջ վառ ու կայտառ չես պահեր. անվերջ թըղթաղերուդ հետ ինչո՞ւ չես միացնիր կտոր մը գոնէ քու ազգային ցաւերուդ, քու անձնական ցաւերուդ դարման մը գտնելու հարցը. Դու չունի՛ս ազգային արժանապատուութեանդ եւր թըթուացնող կտոր մը հետաքրքրութիւն. մարած մշտա՞մ է խղճիդ ձայնը. ցնցուէ՛ քիչ մը, ու չըք շուրջդ անցած դարձածներուն վրայ կեդրոնացուր, մի՛ վախնար. քեզ համաշխարհային այդ կուռին զինուոր կոչելու չեմ եկած, բայց գոնէ զբաղուէ անով ինչ որ քու կզ է, Հայրենիքդ խեղդող, թշուառ ազգիդ մնացած զաւակները հալածող ազգութիւններուն դէմ քեզ կուռի չեմ հրաւիրեր գիտցիր թէ ազգիդ թըշուառները միայն անոնք չեն, անոնցմէ դուրս գու ազգային հոգեմայ ըլլել վէրքերդ ունիս: Կոխ՛ ուրեմն . . . :

Կոխ՛ ունիս դու աղաներու, փաշաներու, ժողովականներու, գործարանատէրներու, վաշխառուներու, ազգային սրբազան դատին դաւաղիւններու, ազգակործան ցեղ կղերականներու դէմ. քու աղբանոց վարժարան-սպանդանոցները, թատրոն դարձած եկեղեցիները, փուշ ու տատաստ արտադրող հողերը, քար ու քանդ ազգապատկան կայուածները, աղբանոց գերեզմանատները, աղբատներու անունով կազմակերպուած անխիւ ընկերութիւնները՝ կոխ՛ կը պահանջեն քեզմէ. կոխ՛ . . . :

Ու երբ 1900 թուականի տարեւտուտին զանգակները զօղանջնե, հայ երիտասարդ, նախ «Կոխ՛» գոչէ ու վերջը խաչակնքելով եկեղեցի մտիր «Բաւաղաղութիւն աշխարհի» աղօթէ:

Սելեծուի աշխարհի կոխը աղօթքէն առաջ կը դասաւորուի:

Ահա այդ տարիին նախասեմքին կոխած մենք կը սեղմուէք ազնիւ ու մաքուր կուռով վառուած ազգայիններու ձեռքերը ու կը համբուրենք նոյն սրբազան բաբախուածով արփող արտի մարդկանց եղբայրացու մը:

Աղեքսանդրիա 1140

Պ Ե Տ Ե Վ Ի Ն

ԱՐԱՍԿԱՆ ԿԵՍԵՔԻ

Երկայն պուրնուդ մ'ձրգած իր լայն ուսերուն, Ուրք բորիկ արագ արագ կը զընայ. Այլ ձեռքն պահած մէջ պուրնուզին ծալքերուն, Զախոյ՛ն՝ ջրղուտ շարժէ եղէք մը հակայ:

Աչքերն յառած անթարթ կէտի մ'անորոշ, Անուշադիր ու երազուն նա կ'անցնի. Թուի լըսել իրեն ծանօթ ձայն մ'անուշ Որ կը խօսի անտառներէ՛ն հայրենի . . . :

Եւ ո՞վ զիտէ . . . Ինչե՛ր կ'անցնին իր մտքէն. Երբեմն ուժգին կը սեղմէ բունն եղէգին. Ու կ'երեւի սեւ նայուածքին կըրակէն, Դառն գաղտնիք մը թաղուած կայ խորն իր կեանքին . . . :

Գեղեցի՛կ է անապատի այդ որդին . . . Բարձր հասակով, հպարտ նոճուց մը հանդոյն. Խոշոր աչքերն ունին նայուածք խոր, մըթին Որ սարսափի դող մը կուտայ քեզ իսկոյն . . . :

Իր պուրնուզին կէս մը բացուած ծալքերէն Կերեւայ թուլ, հուժկու, մաղոտ կուրծք լայն. Գրուուզ մազերն դուրս են կախուեր փաթթոցէն, Ի՛նչոր ձերմակ ծոպերուն հետ կը խաղան:

Խորհրդաւոր երկու նշան աստղածեւ, Վըլին մօտիկ՝ աղօտ հետքեր են թողեր. Եւ արկէն խանձած դէմքին վրայ սեւ Նոր ծլեր են մօրուաց ցանցառ նուրբ թելեր:

Թուի գանդուրներն հովուն տուած, վայրենին, Զեռք պահած մի՛շտ պուրնուզին ծալքին տակ. Նըման այն կոյս անտառներու առիւծին, Կրճտէ կատաղած մերթ ակոսաներն սպիտակ . . . :

Ժամանակ մը, չընեացած դեռ երկրէն, Կ'ապրէր անհող, այդ բընութեան սէգ արդան. Հպարտ ու քաջ, սիրուած երկրին քայլերէն, Իրեն ցեղին փառքը, պարծանքն էր իր տան . . . :

Լարած աղեղն, ձրգած կապարճն ուսերուն, Իր նըթոյցին վրայ ձերմակ կը սուրբար. Պատերազմի վէս աստուածի մը հանդոյն. Եւ անտառաց քաջին յաղթած կը դաճնար . . . :

Եւ իր երկրին գեղուհիներն երազուն, կը նայէին իրեն, խոնաւ աչքերով. Կոյս սրտերնէն կ'ընէր հառաչ մը թագուն, Երբ կերեւէր ան, իր կըրակ նայուածքով . . . :

Բայց ինք կ'անցնէր, արքայի մը պէս հրպարու: Անտարբեր այդ հուրիներու պշտանքին. Ծերմակ ձիւն վրայ վեմ ու հանդարտ Կերպէր մեղմիւ արտոււմ երգերն իր երկրին՝ . . . :

Եկաւ օր մը . . . հնչեց իրեն ալ ժամը . . . Մարմինն ամբողջ խո՛ր սարսուռով մը դողաց . . . Երկրին այրող արեւուն պէս աղբիկ մը Յափշտակեց. գողցաւ իր սիրտն ու գընաց . . . :

Եւ կորսնցուց քունն ու հանգիստն ալ իսպա՛ռ, Մոռացաւ անտանն. նետեց նետերն ու աղեղ. Եւ թափառիկ. դէս դէն. տղան սիրովառ կը փնտռէր իր գեղուհւոյն տունն ու տեղ . . . :

Եկաւ օր մը, գըտաւ հետքը աղւորին. Նա՛ բարբարոս, անգութ ցեղի մ'աղջիկն էր. Իրեններուն խուլ, դարձա՛ր թշնամին. Արեան ծով մը զիրենք յաւէտ կը բաժնէր . . . :

Դողաց հէքը . . . ուզեց խոյս տալ իր երկրէն. Բայց զըթոյրը ընկէ՛ր էր կուրծքին տակ. Եւ ուր փախչիլ վերքը լափող կրակէն. Եւ ուր մոռնալ այն խո՛ր աչքերն անուշակ . . . :

Իրիկուն մը, ուշ էր ժամը. նա անցաւ. Իր սիրելոյն վըրանին մօտ ձին քշեց. Մեխմազձիկ ձայնովն անուշ, սրտագրաւ. Դողզով շնչառով, սիրոյ անվե՛րջ երգն երգեց . . . :

Մնչեց իր ցաւն. գոչեց իր սէրն ու գոռա՛ց. Եւ անտառներն ալ գոռացուց իրեն հետ. Մինչ թռչուններն ծառոց վըրայ. լուռ. ապշած, Կարձակէին հազիւ տկար ծիչ մը մերթ . . . :

Մէջ մ'ալ տեսաւ, վրայն կէս մը բացուած . . . Երա՞զ մ'արդեօք խօլ. կը պարէր գանկին տակ . . . Երկու թուլիչ աչքեր. ջահեր զոյգ վառուած կը նետէին մութին՝ ցոլեր, շողեր տաք . . . :

Ա՛ն էր . . . նախ իր սիրտը ճանչցաւ զՍն իսկոյն. Ինչդի մը պէս ինկաւ անոր ոտից տակ. Մինչ մէկ մատը դրած կարմիր շուրթերուն՝ Կուղզէ՛ր իրեն գեղանին քաղցր մի նայուածք . . . :

Եւ պատանին տօգոյն, երկար մազերով. Իր սիրելոյն առջեւ խոնարհ՝ ճերագրեց. Իրենց երկրին խորհրդաւոր բարբառով Սրտին է՛ն խոր ծալքերն մէկ մէկ քրքրեց . . . :

Քանի՜ ժամեր տեւեց այսպէս. ո՞վ գիտէ . . . :
Չեն համարուիր երջանկութեան հնչող ժամեր . . .
Արեւն անա. առջի շողերն կը նետէ.
Հեռուն՝ ծայրը լեռանց՝ կարմիր է ներկեր . . . :

Եւ զատուեցան երկու տղաքն սիրահար.
Տըխուր նայուածք մը նետելով արեւուն.
Իրենց շուրջը իցի՛ւ տիրէր մի՛շտ խաւար.
Ձրինք ծածկէ՛ր . . . պահէ՛ր աչքէն ամենուն . . . :

Եւ սիրեցին այնպէս՝ ինչպէս կը սիրեն
կրակ թափող արեւուն տակ երկրին այն.
Սէրը մաշող է. փչող է հոն, կըսեն.
Հոն չեն մոռնար, կայրին, մոխիր կը դառնան . . . :

Եւ յիշելով հին վրէժը ցեղային.
Կը խորհէին խոյս տալ տունէն հայրենի.
Իրենց աչքը ծածկել խորհրն անտառին,
Ապրիլ ազատ, գաղանաց նետ վայրենի . . . :

Ձի ոճիր մ'էր իրենց սէրը, գիտէին,
Յաչա այդ մարդկանց արեւնարբու, մոլեռանդ.
Փոյթ չէր թէ այդ՝ իրենց արեւմբ քաւէին,
Աշխարհն ողջոյն իցի՛ւ շրջար քար ու քանդ . . . :

Իրարու մօտ նստած գիշեր մը լռելի,
Կը գիտէին տաք նայուածքով մը զերայ.
Ամպ մ'է գոցեր լուսինը, մութ են երկինք,
Քանի մ'աստղեր կը վառին դէս դէն, ցանցառ . . . :

Յանկարծ ստուեր մ'իրենց մօտիկ կանգ առաւ,
Դիտեց անշարժ երկու տղաքն մի վայրկեան.
Ժպտով մը լայն, սուր ակուններն ցոյց տուաւ
Ռածասելու մօտ՝ գաղանի մը նըման . . . :

Եւ զայրոյթի մտունչ մը խո՛ւլ ու երկա՛ր
Հեռուն՝ լեռներն բիր անդամներ կրկնեցին . . .
Ու գեղնեցան հէ՛ք տղաքը սիրահար,
«Կորանք» ըսին, եւ ողջ մարմնով գողացին . . . :

Եւ ալ կարծես մութին մէջ շատ մ'ստուերներ
Գետնին տակէն դուրս կ'ելնէին մի առ մի.
Եւ վայրենի աղաղակներ մոռնչներ,
Կը պոռթկային բիր կուրծքերէ կատաղի . . . :

Եւ յայտնի էր, մի անաւոր բարկութիւն,
Կը գոռար այդ վայրի մարդոց կուրծքին տակ.
Եւ նախապէս ցեղային Մե՛ծ, Սուրբ Պատուոյն
Պէտք էր քառուէ՛ր հեղեղներով արեան տաք . . . :

Բայց մտածման պէս շարժումով մը արագ,
Դիկեց տղան, իր սիրելին գողանար.
Ցաւակեց թեթեւ, վրայ ձիւնն իր ճերմակ,
Ուզեց կտրել դաշտը, մանկ ի յանտառ . . . :

Ահա նետ մը եկաւ սուլել իր շուրջը.
Ու երկաթի յորդ անձրեւ մը սկըսաւ.
Մէկէն ցաւի խորունկ ու սուր հառաչ մը
Իր սիրելուն վարդ շրթներէն դուրս թուաւ . . . :

Ու նայեցաւ տղան խենթի աչքերով,
Այն ճակտին ուր մահն իր դալուկ կը դնէր.
Կ'իջնէր արեւուն վրդէն վար, լայն շիթերով,
Սիրած անունն՝ շրթանցն վրայ կը մեռնէր . . . :

Եւ ոպանողն հոն էր, ժպտով մը վայրագ
Արեան հոռէն գիտով, մօտիկ հէ՛ք զոյգին,
Կո՛ւշտ կը դիտէր մեռնող աղճկայ հոգեվարք,
Եւ կը հրճուէր ի սես թափուած արցունքին . . . :

Մէկէն, լացող տղան աչքերն վեր առաւ,
Տեսաւ ժպտոն դէմը կեցող ճիւղակին.
Վրիժու կայծը նայուածքին մէջ վտակցաւ.
Քանցեց խանչարն, պատուից կուրծքը դաղանին . . . :

Եւ անաւոր . . . թօթուեց մազերն սեւ, արծակ.
Սիրականին դիակն գրկած պինդ սրտին.
Շուրջը նետեց նայուածք մը սէգ, համարձակ.
Յառաջ քշեց, անտառներու խորն, իր ձին

Եղէգներու պուրակին մէջ. հոն, շինեց.
Իր սիրելուն համար հանգիստ անկողին,
Հողը տխուր, խոնաւ գտաւ. եւ չուզեց
Յանձնել մարմինն սիրականին սեւ հողին . . . :

Գերեզման չէր. օրօրան մ'էր դա քնքուշ.
Ձոր գեղիւնին թեւերն մեղմիկ օրէկին.
«Ննջէ՛ մինակ, իմ աչքի լոյս. քունդ անուշ
— Հառչեց խորունկ — մինչեւ ննջե՛նք միասին . . . »

Եւ ընդհին համբոյրն տուաւ սառած շուրթերուն.
Կեանքին ընկեր՝ ընտրեց եղէգ մը միակ.
Եւ հեռացաւ նա քայլերով երբեուն.
Այդ վառ սէրէն՝ տարաւ. չո՛ր փայտ մ'իյնատակ . . . :

Այսպէս թողով քաղցր հայրենիք, տեղն ու տուն:
Կը թափառի դէս դէն. սրտէ՛ն զարնուած.
Լուռ, չխօսիր. կըսես քո՛ւն է թէ արթուն.
Աչքերը բաց՝ կարծես ըլլայ քննացած . . . :

Աչքերն յառած, անթարթ կէտի մ'անորոշ.
Եղէգը պինդ ձեռքին սեղմած. նա կանցնի՛.
Թուի լսել սիրականին ձայնն անուշ.
Որ եղէգնայ գերեզմանէն կը խօսի . . . :

Աղէքսանդրիա ՄԱՌԻ

ԳԻՏԱԿԱՆ ԶԵՄԱՐՏՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒ 1900 ՏԱՐԻՆ

Արուեստահանգիսի տարին նախանց չպիտի ըլլայ. (այս բառը ի հարկէ իւր բառ-կական իմաստով պէտք չէ ըմբռնել, որովհետեւ գուշակութիւններ ընելու յաւակնութիւնը չունիմ), թէպէտ գիտենք թէ ամեն չորս տարին մի անգամ նահանջ կ'ըլլայ, այսինքն տարին կը նահանջէ, կամ ուրիշ բառերով, օր մը աւելի ուշ կը լրանայ, թէ 1896 տարին նահանջ էր և 366 օրեր ունէր:

Յիշելով անցնինք թէ նահանջ տարւոյն մէկ օրը փետրուար ամսոյ վրայ կը յաւելունք:

Ըսե՛նք պատճառը. նախ պէտք է գիտնալ թէ երկիրը, աստեղագիտական ճիշդ հաշիւներով, արեգական շուրջը կը դառնայ, այսինքն իւր մեկնած կէտին վրայ կը հասնի 365 օր 5 ժամ 48 վայրկեան և 46 երկվայրկեաններու մէջ.

արդ՝ այս թիւը յայտնի կը ցուցնէ թէ տարին իրապէս 365 ամառղ և քառօրդ օր կամ 6 ժամ չէ. հետեւաբար ամեն չորս տարին 1 օր աւելցնելու իրաւունք չունինք և երբ՝ ընդունուած դրութեան համեմատ 1 օր կաւելցնենք, տարին երու ընթացքին մէջ այդ փոքրիկ կարծուած վայրկեանները օրեր կը կազմեն և երկրի շրջանի մասին մեր հաշիւը ճշդօրէն ճշանակեր այն կէտը, ուր որ երկիրը իրականապէս այն միջոցին կը գտնուի. այսինքն երկիրը ամեն տարի գրեթէ 11 վայրկեան և 14 երկվայրկեան միջոցի մէջ աւելի ընթացք մը ըրած կ'ըլլայ. մինչդեռ՝ 4րդ տարւոյն վերջը այդ մէկ օրուան յաւելմամբ, կը կարծենք թէ երկիրը ճիշդ իւր չուկէտին վրայ կը գտնուի:

Յուլիոս Կեսար (46 ին ն. Ք.) Աղէքսանդրացի աստղաբաշխ Սոսիժէնի խորհուրդներուն հետեւելով տարեցոյցին կանոնաւոր և գիտական ձև մը տուաւ, մինչդեռ անկից յառաջ խիստ չփոթ էր. ինքն ալ այնպէս համոզուած էր թէ արեգակնային տարնշրջանը 365 1/4 օր էր, հետեւաբար հրամայեց որ յաջորդական չորս տարիներու երեքը 365 օր և չորրորդը 366 օր հաշուեն. որով յաւելեալ տարին 4ի բազմապատիկ մը և հետեւաբար 4ով բաժանական կ'ըլլար. Այս բարենորոգումը Յուլիան կոչուեցաւ և 325 թուականին Նիկիոյ ժողովէն ալ ընդունուեցաւ, որ հերետիկոս մը դատաւարանելու զբաղած միջոցին, ուզած էր նաև ճշգրէլ Չատկի օրը, քանի որ քրիստոնեայք այդ օրուան մասին համաձայն չէին այն ատեն և շարժուան որ և է մէկ օրն ալ կը տօնէին Չատկի. հետեւաբար այդ ժողովը նախ որոշած էր Չատկիը անպատճառ կիւրակէ օր տօնել, թէ այդ կիրակէն պէտք էր ըլլալ տարւոյն առաջին ամսոյ լուսնին 14րդ օրէն անմիջապէս ետքը կիող կիւրակէն, թէ՛ առաջին ամիսն ըսելով կը հասկնար այն ամիսը, որոյ լուսնի լրումը կը պատահի գարնանային գիշերահաստարի կումառային օրն և կամ նոյն գիշերահաստարէն ետք ամենէն մօտ օրը, թէ վերջապէս գարնանային գիշերահաստարը պէտք էր հաստատ մնալ մարտի 21րդ օրը, որ ատեն պատահած էր գիշերահաստարը ժողովի գումարման տարին: Եւ ժողովը իւր սոյն որոշումները համայն քրիստոնէից ընդունել տալէն յետոյ, հակառակ գործողը կը նշուէ: Միայն թէ վերոգրեալ 11 վայրկեան և 14

ԼԱ ՄԻՉՈՒՄԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎ ԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՅԽԱՐԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇՄԱԿՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:
Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց դուստրած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ, որ գրեթէ աշխարհի տրիշ օր և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:
Ս. ԼԵՈՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:
Տպագրութիւն Ս. Ա. ԳԱՐԻՆԵԱՆ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործաւնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գտնուէ:
ԱԼԷԳՄԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործ. յ'Աղէքսանդրիա.
Le Gérant Dr A. S. HAGOPIAN

երկվայրկեաններու սխալը, որ ժողովին ուշագրութենէն վրիպած պէտք է ըլլայ անշուշտ եւ որ 400 տարիներու մէջ 3 օրէն քիչ աւելի սխալ մը կ'արտադրէր, նկատողութեան չառնուեցաւ մինչեւ 1582 տարին, այսինքն Նիկիոյ ժողովէն 1257 տարի ետքը, որ ատեն սխալը արդէն 9,7795 օր կամ գրեթէ 10 օրի յանգած էր. վասն զի 1582ին գարնանային գիշերահաւասարը 11 մարտի ինկած էր. Արդ՝ Գրիգոր ԺԳ. Պապը, այս անտեղութեան առաջը առնելու համար (թերեւս ո՛չ այնքան ի սէր գիտութեան եւ ճշմարտութեան, այլ մանաւանդ կրօնական տօներու ինքրոց լուծման համար) 1582ին հրամայեց (որ ատեն պապութիւնը ամէն իշխանութիւն ունէր. երանելի՛ ժամանակներ . . .) որ հոկտեմբեր 4 ի յաջորդ օրը հոկտեմբեր 15 կոչուի եւ որպէս զի նոյն սխալը ժամանակի ընթացքին մէջ դարձեալ յառաջ չ'գայ, ըստ Լիւիս աստեղագէտի խորհրդոց, որոշեց որ ամէն 100 նահանջ տարիներու վրայ միայն 97 հաշուուի. չնչեղով այսպէս այն երեք օրերը որ Յուլիան տօմարի համաձայն 400 տարին անդամ մը կը բարդուին:

Ուրեմն այն տարիները որք Յուլիան տօմարին մէջ նահանջ ըլլալով, Գրիգորեան տօմարին մէջ նահանջ ըլլալէ կը դադրին, դարուն վերջին այն տարիներն կամ դարագլուխներն (année séculaire) են, որոց վերջին երկու գերօները չնչեղէ յետոյ, մնացեալ թիւը 4ով բաժանական չէ. ինչպէս են 1700 եւ 1800 որք նահանջ չեղան եւ ըստ այնմ 1900 ալ չպիտի ըլլայ. բայց 2000ը նահանջ պիտի ըլլայ. թուագիտական համառօտութեամբ ըսենք թէ նահանջ տարի ընդունուած են 4ով բաժանական թիւերը, միայն թէ այս դրութենէն յառաջ եկած սխալն ալ (400 տարին 3 օր) պակասեցնելու համար նահանջ չընդունիլ այն դարագլուխները որք 400 ով բաժանական չեն:

Գրիգորեան այս բարենորոգումը անմիջապէս ընդունուեցաւ կաթոլիկ ժողովուրդներէ, որոց հետեւեցան գերմանիոյ բողոքականք 1600ին եւ Անգղիացիք 1752ին եւ հետզհետէ հիւսիսային եւրոպայի ուրիշ երկիրներ. իսկ Յուլիան տօմարը ընդգրկող եւ զայն ոգի ի բռին պահպանող ժողովուրդներն ինչպէս են՝ լուսաւորչական հայերս, Յոյներն եւ Ռուսներն, կրօնամտութեան շղթայապիւրկ լուծին տակ ընկճած եւ անոր խաւարին մէջ կորսուած՝ չեն ուղեր իրենց աչքերը բանալ մաթեմատիքական ճշմարտութեանց յստակ լոյսին առջև եւ գուցէ կը սարսափին երկինքէն իրենց գըլխուն վրայ ի՛նչեքիք նզովքներէն Թերեւս հայերս փութով ընդգրկէինք գիտական այս ճշմարտութիւնը, եթէ ստիպուած չըլլայինք, ազգային եւ քաղաքական տեսակէտներով, անտեղի աւանդամբլ մը եւ հետեող մը ըլլալու, միմիայն մեր կարգուսարքը պահպանելու նպատակով:

Արդ Յուլիան տօմարին վերոյիշեալ սխալին հետեանօք 1700ին եւ 1800ին երկու օր եւս աւելցած ըլլալով, հին եւ նոր տօմարներու մէջ տարբերութիւնը 12 օր եղած էր եւ 1900 ին համար ալ օր մ'աւելցնելով տարբերութիւնը 13 ի պիտի բարձրանայ 1900 փետր. 16 էն (Հ. Տ.) յետոյ:

99 Գեկտ. 27/8 Յունի. 1900
Գահիրէ
Հ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

Առանց խտապահանջ ըլլալու կրնանք ըսել որ օրինակելի կենցաղ մը չունեցանք այն տարեւոր շրջանին մէջ, որ մի քանի ժամէ ի վեր անհաւնալի կերպով ընկղմեցաւ յաւիտանականութեան գիրկը: Բայց եթէ տարին անհետացաւ, արարք եւ եղելութիւնք տակաւին մեր աչաց առջև, մեր մտաց մէջ են եւ միթէ մեր ամենուս խիղճը չ'վկայիր բարձրաձայն, որ այդ 365 օրերուն մէջ ոչինչ ըրինք, ոչինչ գործեցինք՝ ի փաստ եւ ի պատիւ մարդկութեան, որուն մի մասն է նաեւ մեր ազգը:

Մինչդեռ մարդկային ցեղին ինքնակոչ եւ մեծագլուխ ներկայացուցիչք անլուր ճիգեր կ'ընեն ընդաւր մարդկային էակներ ապահովապէս ջարդելու համար յանուն արդարութեան եւ ի սէր խաղաղութեան. մինչդեռ ազգք եւ աղինք՝ իրիւր շեկակոյտնա՛նք՝ կը տարուբերուին քաղաքակիրթ աշխարհիս վարիչներու կողմէն յարուցուած կատաղի աւելց վրայ, մինչդեռ Աստուած իր չափազանց մոռցուած գոյութիւնը կը հրապարակէ հետզհետէ աւելի բռուն եւ յստակ միջոցներով, մենք՝ փոխանակ ուշաբերելով մի սիրտ մի հոգի ըլլալու՝ դերազանցօրէն մասնակցեցանք երկարադուրիս խառնաշփոթութեանց, սա յատկանշական տարբերութեամբ՝ որ մինչդեռ ազգ մը ուրիշ ազգի դէմ կը դաւէ, մենք դաւեցինք բուն իսկ մեր ազգին դէմ, ընդհանուր հոսանքը զօրացնելու համար մեր ուժերը ինայնով:

Տեղը չէ մանրամասնութեանց մէջ մտնելու, եւ արդէն հարկ ալ չկայ: Ընթերցողը հասցաւ անուշտ թէ ո՞րպիսի եղելութեանց կ'ակնարկիմ: Ուղեկորոյս քաղաքակրթութիւնը՝ որուն շուրթեալ կացութիւնը դարմանք եւ միանգամայն ա՛ն ու սարսափ կը սփռէ երկրիս վրայ, եւ որուն նմանը չ'ենք կրնար գտնել աշխարհիս պատմութեան էջերուն մէջ, ազգարարն է մօտալուտ համայնալինջ փոթորիկ մը: Ուստի ջանալու ենք որ մեր անհետատեսութեան, երկպառակութեան, տղայական կազ ու կոիւնտերուն շնորհիւ, անզոշաբար եւ տխմարաբար բաղդակից չ'ըլլանք այն անհամար բազմութեան, որ սահմանուած է ոչնչանալու այդ մրրիկին մէջ:

Եթէ կ'ուզենք պահպանել մեր ազգութիւնը, մեր հաւատքը, մեր ընտանիքն ու պատիւը, պէտք է որ մեր գոյութիւնն ու գործունէութիւնը այլապէս ապացուցանենք. քան սրճարաններու անկիւնները նստած անգործադրելի ծրարները պատրաստելով, կամ թաղերու մէջ թափառելով եւ կամ անխորհուրդ վէճերով մեր ժամանակները սպաննելով:

Եւ հիմայ կը մաղթենք որ Նոր Տարին բարեյաջող ըլլայ մեզ ամենուս: Եթէ մարդկային կարողութիւնը բաւէր արգիլելու վիշտերն ու աղէտները, անտարակոյս իւրաքանչիւր օր պիտի փութար ամեն հարք ի գործ դնել այդ նպատակին հասնելու համար: Բայց հաւատացեալք գիտեն որ Աստուած՝ իր անբաւ իմաստութեամբ՝ պատշաճ չէ դատած որ առանց ցաւոց կեանք անցընենք. չենք կրնար գիտնալ թէ որպիսի աղէտք եւ տառապանք մեզ կ'ապաստեն ներկայ տարուոյս ընթացքին մէջ. բայց ասիկա պատճառ մ'ըլլալու չէ մեր պարտականութեանց մէջ թերանալու: Մեզմէ ոմանք թերեւս չ'պիտի տեսնեն տարուոյս վերջը, եւ եթէ խորհինք որ մեր բարեգործութեամբ միայն պիտի կրնանք ապրիլ գերեզմանէն անդին, այն ատեն պէտք կ'զգանք ետանդազին յարելու այն ողորմապիւրական զգայմանց, որոնք այսօրիս տօնախմբութեան օրի կամայ ալամայ մեր ամբողջ անձը կը ցնցին թշուառութեանց առջև, դէպի

մեզ կարկառուած անգոր ձեռաց ի տես եւ ընդաւր են այն ձեռքերը՝ որք դէպ ի մեզ կը կարկառուն. մեր հայրենեաց որբերուն, այրիներուն ձեռքերը: Խեղճ արարածներ: Մեզմէ՛ արտասանմանի եղբայրներէն կը յուսան ամեն բան: Բայց մենք կը խորհինք արդեօք անոնց վրայ:

Երբ անուն հրճուանք կ'զգանք ի տես ուրախութեան մեր սիրելեաց եւ մեր մանկուոյն՝ իրենց եղած ոչ-նարկաւոր եւ յաճախ աւելորդ նուէրի մը համար, կ'երեւակայինք արդեօք այն երկնային զմայլումը որուն մէջ պիտի սուղինք ամենափոքր նուէր մ'ընելով մեր միւս սիրելեաց եւ մանկուոյն, որոնք ամեն բանի կարօտը կը քաշեն. հացի կտորի մը, քուրջի մը: Կը մակարեւրենք այն օրհնութեան աղաղակները որոնք պիտի թռչին չափահասներու զաղգոլուն շուրթներէն, այն ձեռնամած ծնրազրութիւնը տփուռնած անմեղ ձագուկներու՝ որոնց անմոռնջ եւ անկեղծ մաղթանքը պիտի յառաջեն ամեն տեսակ աղօթք առ ոտս արքայից Արքային:

Երբ մենք զմեզ կը փաթթենք ամենափափուկ եւ թանկագին զգեստներով՝ մեր մտքին մէջ չափազանցեալ ցուրտէ մը պատասպարուելու համար, կը յիշենք արդեօք որ հետուն՝ Մայր Հայրենեաց հողերուն վրայ՝ իրապէս սառնաշունչ հովերուն տակ մանկութիւնը կը սառնի իրենց մօր ստուած կուրծքերուն վրայ:

Մաղթենք որ նոր տարին բարեյաջող ըլլայ մեզ ամենուս. բայց չ'մոռնանք նաեւ որ մեր իւրաքանչիւրին իր ժամանց ամենօրեայ վտանգած դուժարով Հայաստանի մէջ ամբողջ ընտանիք մը կը պահպանուի օտերով: Չ'մոռնանք որ մեր մէկ հատ սիկառի դրամը հայրենակցի մը կեանքը կրնայ աղատել:

Վերջապէս թէ՛ մեր ընտանեաց մէջ, թէ՛ դուրսը յիշենք մեր այն հայրերն ու մայրերը, եղբայրներ, քոյրերը եւ դաւակները որոնք անօթի ծարաւ, մերկ, անպատասպար, հաղար ու մէկ վտանգներու ենթարկուած իրենց արտասահմանի արեւակցաց վրայ յառած են նուազլուտ աչքեր, սպասելով ուտեստ, զգեստ անոնց առատաձեռնութիւնէն. ազատութիւն եւ կեանք՝ անոնց աղիւ ընթացքէն յաշտ օտարաց: Յիշենք, միշտ յիշենք, որպէսզի յիշուինք:

Վերջին անգամ ըլլալով մաղթենք որ Նոր Տարին բարեյաջող ըլլայ մեզ ամենուս. եւ մանաւանդ մաղթենք որ մեր հրապարակազիրք դառնան եւ ըլլան պարսնանաւ, մեր յեղափոխականք՝ խոհուն, ազգասէր, ժողովուրդք բարեսէր, ազգպետք՝ ժողովրդասէր եւ հովիւք Քրիստոսասէր որպէսզի կարող ըլլանք վտանգութեամբ նայիլ ապագային վրայ, եւ արժանի ըլլալ « մեծ աղբ » եւ « մարդ ի պատկեր Աստուծոյ » պատուանուանց՝ բարեբուն բուն նշանակութեամբը:

Գահիրէ 1/13 Յունի. 1900

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ «ՀԱՅՐԵՆԻԿ»Ի
Յաւօք սրտի կը ծանուցանենք թէ, այն շէնքը, ուր «Հայրենիք» կը հրատարակուէր, անցեալ գիշեր հրոյ ճարակ եղաւ: Վարչութիւնս կարելի եղածին չափ շուտով պիտի հրատարակէ թերթը: Մեր բաժանորդները կրնան ապահով ըլլալ, զի «Հայրենիք» ապահովագրուած էր: Վարչութիւն «Հայրենիք»
Գեկտ 18. 99
Մեր առժամեայ հասցէն է —
THE HAYRENİK
458 3rd Ave., New York City.
Փատարան Տիար Ս. Փափազեան կը ծանուցանէ թէ՛ իր գրասեննակներն երէկուրնէ սկսեալ փոխադրուած են Շարիա Մանսաթէ, Տուն Զօղէպ Ն՝ 3, Անգլիական նախկին հրամանատարի տանը կից: